ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N5

« ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՀՄԱ-ԱՊՁԲ-19/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

ք. Երևան 17 դեկտեմբերի 2019թ.

Ժամը 17:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ռուբեն Դարբինյան

Հանձնաժողովի անդամներ՝ Արմեն Հովսեփյան, Հայկ Հովհաննիսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Հեղինե Թադևոսյան

1. «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՀՄԱ-ԱՊՁԲ-19/1» ծածկագրով ընթացակարգի հայտերի գնահատման, արդյունքների ամփոփման և պայմանագիր կնքելու մասին.

1.1 ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար անվտանգության ռենտգեն սարքերի ձեռքբերման նպատակով, հրատապ մեկ անձի միջոցով, էլեկտրոնային ձևով կազմակերպված «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՀՄԱ-ԱՊՁԲ-19/1» ծածկագրով գնման ընթացակարգը www.armeps.am կայքում հրապարակվել է 12.11.2019թ.-ին, ինչպես նաև հրավերը հրապարակվել է www. gnumner.am պաշտոնական կայքում:

1.2 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացվել են 2019 թվականի նոյեմբերի 15-ին, Ժամը՝ 11:00-ին www.armeps.am կայքի միջոցով:

1.3 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՀՄԱ-ԱՊՁԲ-19/1» ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ «Արեմպա Ինթերնեյշնլ» ՍՊԸ ՖՋԸ-ն 25.11.2019թ.-ին ներկայացրել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/96 ծածկագրով բողոքը, և համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասի՝ գնման գործընթացը կասեցվել է:

1.4 Հիմք ընդունելով բողոքներ քննող անձի՝ «Արեմպա Ինթերնեյշնլ» ՍՊԸ ՖՋԸ-ի 25.11.2019թ-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/96 ծածկագրով բողոքը բավարարելու մասին որոշումը՝ «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՀՄԱ-ԱՊՁԲ-19/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց.

1) Դադարեցնել 20.11.2019թ.-ի «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՀՄԱ-ԱՊՁԲ-19/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշումը՝ «ԴԵԼՏԱ ՔՈՆՍԹՐԱՔՇԸՆ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու և 1-ին տեղ զբաղեցրած՝ հաղթող մասնակից ճանաչելու մասին:

2) 1-ին տեղ զբաղեցրած՝ հաղթող մասնակից ճանաչել՝ հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակից «Արեմպա Ինթերնեյշնլ» ՍՊԸ ՖՋԸ-ին, քանի որ նրա առաջարկած գինը չի գերազանցում այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

3) Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը (կցվում է):

4) «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով՝ անգործության ժամկետի ավարտից հետո, ընտրված մասնակցի՝ «Արեմպա Ինթերնեյշնլ» ՍՊԸ ՖԶԸ-ի հետ կնքել գնման պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի.

Նախագահ՝ ---------- Ռ. Դարբինյան

Քարտուղար՝ ---------- Հ. Թադևոսյան

Գնահատող անդամներ՝

1. ---------- Ա. Հովսեփյան

2. ---------- Հ. Հովհաննիսյան

Հավելված N 5

ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի

մայիսի 30-ի N 265-Ա հրամանի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
պայմանագիր կնքելու որոշման մասին

Ընթացակարգի ծածկագիրը՝ **«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՀՄԱ-ԱՊՁԲ-19/1»**

Պատվիրատուն՝ «ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն»-ը, ստորև ներկայացնում է իր կարիքների համար անվտանգության ռենտգեն սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված **«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՀՄԱ-ԱՊՁԲ-19/1»** ծածկագրով հրատապ մեկ անձի ձևով պայմանագիր կնքելու որոշման մասին տեղեկատվությունը:

Գնահատող հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 5 արձանագրությամբ հաստատվել է մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները: Համաձայն որի՝

Չափաբաժին N 1:
Գնման առարկա է հանդիսանում՝ **«Անվտանգության ռենտգեն սարքեր»**

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Հրավերի պահանջներին համապատասխանող հայտեր /համապատասխանելու դեպքում նշել "X"/	Հրավերի պահանջներին չհամապատասխանող հայտեր /չհամապատասխանելու դեպքում նշել "X"/	Անհամապատասխանության համառոտ նկարագրություն
1	«Արեմպա Ինթերնեյշնլ» ՍՊԸ ՖՋԸ	X		Բողոքը քննող անձի Լևոն Օհանյանի թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/96 որոշումը
2	«ԴԵԼՏԱ ՔՈՆՍԹՐԱՔՇԸՆ» ՍՊԸ		X	
3	« ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ		X	Տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերի պահանջներին

Մասնակիցների զբաղեցրած տեղերը	Մասնակցի անվանումը	Ընտրված մասնակից /ընտրված մասնակցի համար նշել "X"/	Մասնակցի առաջարկած գին /առանց ԱԱՀ /
1	«Արեմպա Ինթերնեյշնլ» ՍՊԸ ՖՋԸ	X	190800500

Ընտրված մասնակցին որոշելու համար կիրառված չափանիշ՝ բավարար գնահատված հայտերից նվազագույն գնային առաջարկ:

N1 չափաբաժնի մասով **«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՀՄԱ-ԱՊՁԲ-19/1»** ծածկագրով հրատապ մեկ անձի ձևով "Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել **« ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՀՄԱ-ԱՊՁԲ-19/1 »** ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Հեղինե Թադևոսյանին:

Հեռախոս՝ **060-37-18-61:**
Էլեկտրանային փոստ՝ **qkv-gnumner@mail.ru:**
Պատվիրատու՝ **ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայություն:**